**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 նոյեմբերի 2022թվականի N 1013*

## ՄԿՐՏԻՉ ՀՈՎԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ (ՕԳՆԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 14-րդ ենթակետով, հիմք ընդունելով Թաղնոս Մկրտչյանի դիմումը և Հրազդան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 28 արձանագրությունը՝

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

1. Հրազդան համայնքի Վանատուր թաղամասի 8 տան բնակիչ Թաղնոս Հովիկի Մկրտչյանին նշանակել իր եղբոր՝ Մկրտիչ Հովիկի Մկրտչյանի /ծնված՝ 08.08.1993թ./ նկատմամբ պատրոն (օգնական):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թաղնոս Հովիկի Մկրտչյանին սույն որոշման ընդունման մասին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

02 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*02 նոյեմբերի 2022թվականի N 1014*

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.

1) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 8 /ութ/ հատ,

2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 7 /յոթ/ հատ,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. նոյեմբերի 02-ի
N 1014 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՁ Նունե Բարեղամյան | Գյուղ Լեռնանիստ, տուն1, 34 փողոց | Ք. Հրազդան, Շահումյան 2,16 նրբ. | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 2. | ԱՁ Նունե Բարեղամյան | Գյուղ Լեռնանիստ, տուն1, 34 փողոց | Ք. Հրազդան, Շահումյան 2,16 նրբ. | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 3. | ԱՁ Արամ Հակոբյան | Ք. Երևան Արարատյան 1գ., 4/16 | Ք. Հրազդան, Շահումյան 211/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 4. | ԱՁ Արամ Հակոբյան | Ք. Երևան Արարատյան 1գ., 4/16 | Ք. Հրազդան, Շահումյան 211/1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 5. | ԱՁ Ռոբերտ Մանգասարյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 107 շենք, 42 բն. | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 229 շենք, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 6. | ԱՁ Ռոբերտ Մանգասարյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 107 շենք, 42 բն. | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 229 շենք, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | ԱՁ Արշակ Աղասարյան | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5 փ.,4/1 | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5 փ., թիվ1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 8. | ԱՁ Արշակ Աղասարյան | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5 փ.,4/1 | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5 փ., թիվ1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 9. | ԱՁ Գեղանուշ Սարգսյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 85 շենք, 11 բն. | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 93/47 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 10 | ԱՁ Գեղանուշ Սարգսյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 85 շենք, 11 բն. | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 93/47 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 11. | ԱՁ Սևակ Հովհաննիսյան | Ք. Հրազդան, Կոճոռ 43 | Ք. Հրազդան, Կոճոռ 43 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 12. | ԱՁ Սևակ Հովհաննիսյան | Ք. Հրազդան, Կոճոռ 43 | Ք. Հրազդան, Կոճոռ 43 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 13. | ԱՁ Արմեն Մովսիսյան | Գյուղ Լեռնանիստ, 8 փ., 10 փկղ, տուն1 | Գյուղ Լեռնանիստ, 7 փ., թիվ 4 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 14. | ԱՁ Արմեն Մովսիսյան | Գյուղ Լեռնանիստ, 8 փ., 10 փկղ, տուն1 | Գյուղ Լեռնանիստ, 7 փ., թիվ 4 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 15. | ԱՁ Լիանա Շահնազարյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 95 շենք, 26 բն. | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 9/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *ՈՐՈՇՈՒՄ*

*02 նոյեմբերի 2022թվականի N 1015*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 22-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժիններիի պահանջներով, հիմք ընդունելով 2022 թվականի հուլիսի 08-ին «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20224JG3JV ծածկագիրը և Ռուբիկ Մուսադերյանի լիազորված անձ Գուրգեն Հարությունյանի 2022 թվականի սեպտեմբերի 05-ի դիմումը.

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

1.Օրինական ճանաչել Երևան քաղաքի Արաբկիր Մամիկոնյանց փողոցի 51 շենքի թիվ 35 բնակարանի բնակիչ Ռուբիկ Սարգսի Մուսադերյանի կողմից Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հայ Ֆիդայիների փողոց 34 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2639277, տրված՝ 2009 թվականի սեպտեմբերի 24-ին) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 101.51քմ արտաքին մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտը՝ օրինականացման վճարը սահմանել 399 800 (երեք հարյուր իննսունինը հազար ութ հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:

2.Ռուբիկ Սարգսի Մուսադերյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի օղակաձև խաչմերուկին հարող տարածքում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, քաղաք Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց 34:

3.Ռուբիկ Սարգսի Մուսադերյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հայ Ֆիդայիների փողոց 34 հասցեում գտնվող հողամասի 72.9քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, քաղաք Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց 34/2, իսկ 526.3քմ մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, քաղաք Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց 34:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

02 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 նոյեմբերի 2022թվականի N 1016*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 13-ի № 188 որոշումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի Ռազմիկ Միքայելյան փողոցի 4-րդ շենքի 91,34 քառակուսի մետր մակերեսով № 6 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ № 30052022-07-0094, տրված՝ 30.05.2022 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող Սիրանուշ Մկրտչի Մկրտչյանին (ծնված՝ 19.01.1962 թվականին, նույնականացման քարտ՝ № 002720555, տրված՝ 06.04.2014 թվականին, 049-ի կողմից):

2.Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 5 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

02 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*03 նոյեմբերի 2022թվականի N 1017*

## ԱՐՄԱՆ ԱՇՈՏԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 14-ի N 160 որոշման հավելվածը և 2022 թվականի հոկտեմբերի 28-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N5 արձանագրությունը.

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Սոլակ գյուղում գտնվող 07-060-0563-0095 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության (արոտավայր) 0.09831հա մակերեսով հողամասը 1 725 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) դրամ արժեքով օտարել Երևան քաղաքի Աջափնյակ, Էստոնական փողոց 13 շենքի թիվ 9 բնակարանի բնակիչ Արման Աշոտի Հայրապետյանին գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

2.Աճուրդով ձեռքբերված 0.09831հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ   Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*03 նոյեմբերի 2022թվականի N 1018*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վանիկ Պետրոսյանի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 35 շենքի թիվ 36 բնակարանի բնակիչ Վանիկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2186326, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր Նոր թաղամաս 7:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

03 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*03 նոյեմբերի 2022թվականի N 1019*

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վանիկ Պետրոսյանի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 35 շենքի թիվ 36 բնակարանի բնակիչ Վանիկ Պետրոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2204211, տրված՝ 2006 թվականի հունիսի 20-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց 48:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

03 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*03 նոյեմբերի 2022թվականի N 1020*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Քրիստինե Այվազյանի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 10 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ Քրիստինե Այվազյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20052022-07-0040, գաղտնաբառ՝ ASBYXAAKN6LA) Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 345/2:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

03 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*03 նոյեմբերի 2022թվականի N 1021*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վանիկ Պետրոսյանի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումը.

## <u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 35 շենքի թիվ 36 բնակարանի բնակիչ Վանիկ Պետրոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2182656, տրված՝ 2006 թվականի մայիսի 6-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց 48/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

03 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 նոյեմբերի 2022թվականի N 1022*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 13.9քմ մակերեսով 07-001-0510-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 5-րդ փողոց 28/3:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

03 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*03 նոյեմբերի 2022թվականի N 1023*

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 171 որոշումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի «Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում 2022 թվականի նոյեմբերից մինչև 2023 թվականի մայիս ամիսը «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» 4819 հոդվածով նախատեսված ծախսերից ամսական 60000 /վաթսուն հազար/ դրամ հատկացնել Երեխաների աջակցության հիմնադրամի «Հատուկ կարիքներ ունեցող երեխաների ցերեկային խնամքի և զարգացման կենտրոնին» ջեռուցման ծախսերի փոխհատուցման համար:
2.Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*04 նոյեմբերի 2022թվականի N 1024*

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Մանվել Ռաֆայելյանի 2022 թվականի նոյեմբերի 2-ի դիմումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Իշխան Ռաֆայելյանին (ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական ԱԱ N040029, տրված՝ 2005 թվականի հունիսի 6-ին) պատկանող (տեխնիկական պասպորտ 856, տրված Հայկական ՍՍՀ բնակարանային-կոմունալ տնտեսության մինիստրության բնակարանային տնտեսության գլխավոր վարչության հանրապետական տեխնիկական գույքագրման բյուրոյի կողմից 1984 թվականի դեկտեմբերի 28-ին) Հրազդան քաղաքի Աթարբեկյան թաղամաս 326 հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 326 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 նոյեմբերի 2022թվականի N 1025*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Սոնա Ղալեչյանի 2022 թվականի մարտի 4-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022MYJKKG ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 57 մասնագիտական եզրակացությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 07-001-0452-0102 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 44/12:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 44 շենքի թիվ 42 բնակարանի բնակիչ Սոնա Ղալեչյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 44/12 հասցեում գտնվող 33.88քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:

3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 33.88քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 նոյեմբերի 2022թվականի N 1026*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿՈՒՂԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Արսեն Հախվերդյանի 2022 թվականի մարտի 1-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20226P2475 ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 58 մասնագիտական եզրակացությունը.

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0514-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 213:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 227 շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ Արսեն Հախվերդյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 213 հասցեում գտնվող 25.93քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակի նկուղը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակի նկուղը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 25.93քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*04 նոյեմբերի 2022թվականի N 1027*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Հակոբ Ղասաբյանի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022LGFQXY ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 59 մասնագիտական եզրակացությունը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0142-0007 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 4-րդ փողոց, 3-րդ նրբանցք 71/1:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 125 շենքի թիվ 10 բնակարանի բնակիչ Հակոբ Ղասաբյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոց 3-րդ նրբանցք 71/1 հասցեում գտնվող 25.66քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:

3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 25.66քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*07 նոյեմբերի 2022թվականի N 1028*

### ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 5 /հինգ/ հատ,
2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 4 /չորս/ հատ,
3)համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման՝1 /մեկ/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՑՈՒՑԱԿ
## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական վճարի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՁ Մարինե Ղարիբյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս,18/16 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Չ.Անդրանիկի պողոտա 12 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 2. | ԱՁ Մարինե Ղարիբյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս,18/16 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Չ.Անդրանիկի պողոտա 12 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 3. | ԱՁ Սուսաննա Սարգսյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 82/49 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս,82/38 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 4. | ԱՁ Սուսաննա Սարգսյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 82/49 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս,82/38 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 5. | ԱՁ Նազելի Սիմոնյան | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 233/05 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 76/01 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 6. | ԱՁ Նազելի Սիմոնյան | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 233/05 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 76/01 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 7. | ԱՁ Պավել Թավաքալյան | Կոտայքի մարզ, գյուղ Մեղրաձոր, 1 փողոց, 1 փակուղի, տուն 16 | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 41/02 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 8. | ԱՁ Պավել Թավաքալյան | Կոտայքի մարզ, գյուղ Մեղրաձոր, 1 փողոց, 1 փակուղի, տուն 16 | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, 41/02 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 9. | ԱՁ Սուրիկ Խաչատրյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս 84/42 | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 10-րդ փողոց, 6-րդ նրբանցք, տուն 11 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |
| 10. | ԱՁ Սուրիկ Խաչատրյան | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս 84/42 | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 10-րդ փողոց, 6-րդ նրբանցք, տուն 11 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 4-րդ եռամսյակի համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## ***ՈՐՈՇՈՒՄ***

*08 նոյեմբերի 2022թվականի N 1029*

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշմամբ հաստատված հավելվածով.

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

1.Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2023 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մասին» և «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:

2.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2023 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մասին» և «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման անցկացման վերաբերյալ հայտարարությունը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

3.Հանրային քննարկման անցկացումը հանձնարարել Հրազդան համայնքապետարանի գլխավոր մասնագետ - տնտեսական զարգացման ծրագրերի հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին:

4.Հրազդան համայնքապետարանի գլխավոր մասնագետ - տնտեսական զարգացման ծրագրերի հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին՝ ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2023 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մասին» և «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման անցկացման վերաբերյալ հայտարարության

տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:
5.Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել Հրազդանի համայնքապետարանի գլխավոր մասնագետ - տնտեսական զարգացման ծրագրերի հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանի վրա:
6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանին:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

08 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի նոյեմբերի 08-ի
N 1029 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2023 թվականի նոյեմբերի 08-ից մինչև նոյեմբերի 23-ը ներառյալ կազմակերպվող Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2023 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մասին» և «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկմանը:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2023 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մասին» և «Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2022 թվականի նոյեմբերի 24-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:

Հանրային քննարկման ընթացքում՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ին ժամը 11:00-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060704010 հեռախոսահամարով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *ՈՐՈՇՈՒՄ*

*08 նոյեմբերի 2022թվականի N 1030*

### ԽԱՆՈՒԹԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սիրանուշ Մկրտչյանի 2022 թվականի նոյեմբերի 4-ի դիմումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ռ.Միքայելյան փողոցի 4 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ Սիրանուշ Մկրտչյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 25-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում N 3038, ժառանգական գործ N 89/ Հրազդան քաղաքի Ռ. Միքայելյան փողոցի 2 շենքի առաջին հարկում գտնվող խանութին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Ռ.Միքայելյան փողոց, 2 շենք, 2/5 խանութ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

08 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*08 նոյեմբերի 2022թվականի N 1031*

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*08 նոյեմբերի 2022թվականի N 1032*

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Արմեն Բարսեղյանի 2022 թվականի նոյեմբերի 4-ի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոցի 16 շենքի թիվ 22 բնակարանի բնակիչ Արմեն Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2266156, տրված՝ 2007 թվականի հունվարի 26-ին) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սայաթ-Նովայի փողոց, 1-ին նրբանցք 10:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

08 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*08 նոյեմբերի 2022թվականի N 1033*

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Լարիսա Երիցյանի 2022 թվականի նոյեմբերի 4-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Մյասնիկյան փողոցի 11 շենքի թիվ 20 բնակարանի բնակիչ Լարիսա Երիցյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1494860, տրված՝ 2005 թվականի սեպտեմբերի 20-ին) Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս, Երվանդ Քոչարի փողոց 14:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

08 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*09 նոյեմբերի 2022թվականի N 1034*

## ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*09 նոյեմբերի 2022թվականի N 1035*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ԹԻՎ 336 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով.

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի քաղաքապետի 2007 թվականի հուլիսի 11-ի «Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 312 շենքի թիվ 29 բնակարանը սեփականաշնորհելու թույլտվություն տալու մասին» թիվ 336 որոշման 2-րդ կետում «Հակոբյան Արշալույս Մ.-կինը» բառերը փոխարինել «Խաչատրյան Արշալույս Մ.-կինը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

09 նոյեմբերի 2022թ.
ք.Հրազդան